

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկակի վեցամս'այ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկակի վեցամսայ	8 "
Անկերիկայի համար	3 սյ.
սարեկակի վեցամսայ	1.50 "

Ծանուցումն տողը առաջին երեսին համար 40 սանթրիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթրիմ է: Երեսին առաջին անգամներու համար 20 0/0 գեղը կը լայն:

Վառճառի համար ձեռք 10 սանթրիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱՌԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯТЪ

Նամակ եւ դրամ որ կիչ խորագրերսանս հասցիին

Редакция на вѣстанкъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹՐԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹՐԻՄ

Գրութիւնք եւ չեկ տրոյիք

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԵՆԻՆԸ ՊԷՏԻ Ե ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

ԴԱՅՆԱԿԱԿԱՆ ՍԵՉ ՀԱՍՏԱԿԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ձեր միջին ամսուանը յայտնող ներ են լինում թէ ինչի՞ ես պայքարը առաջուց չեմ սկսել, հակառակորդներն էլ յանդգնում են ժողովրդի և համակիրների մէջ սիրտ պատրուկ մտքեր տարածել որ ես պայքարը միայն Գրիստափորի մահանից վերջն եմ սկսել, իբր թէ քաջութիւն չեմ ունեցել նրա ողջ ժամանակը սկսելու և մանաւանդ պայքարի զրոյացումը եղել է զրամները չը յանձնելուս նպատակը: Ի՞նչ քանիցս շնչոցները, թեւ լով սնարմումի բոլոր յօգւածները, որ պարքարը վաղուց սկսված է. մենք խուսափեցինք հանգուցեալ Գրիստափորի հետ ունեցած պայքարի անձնական զօկիւման. ներ մէջ տեղ բերելու. չուզելով մեռած գործիչի հետ ունեցած խնդիրները ամբողջ մերկութեամբ դնել հրապարակ, մանաւանդ երբ նա վերջին տարիներում արդէն սկսել էր որոշ չափով վտանգաւոր գործերի մէջ մտնել: Ինչպէս կան պայքարի կան մարմինները և օրգանները իրենց ստերով պայքարիս ազդեցութիւնը կտրելու տենչով սողորված ինձ ստիպում են այլ եւս այդ տեսակ փափկանկատութիւնների կարեւորութիւն չը տալ:

Արդէն յայտարարել եմ որ 98 ընդհանուր ժողովի միջոցին հանգուցեալ Գրիստափորի և Դաշնակցութեան մէջ տիրող ողիւն յայտնվեց ինձ և ուրիշ ընկերների և այդ չարիքի առջևը առնելու համար սնարմումը հըրատարակեց մի շարք յօգւածներ, որոնց առաջինն է Պիրող յեղափոխականները: Այդ յօգւածը ուղղված էր սիստէմի դէմ և սիստէմի անձնաւորութիւնը ընդունելով իր վրա, յօգւածագիր Բարա Գասպարին և ինձ գրում է մի հայհոյական նամակ որով ապակեպրոնացման մէջ կատարեալ

անասհան իշխանութիւն ունեցողի հովեր առած մեզ սպառնում է որ այլեւս ինքը մեզ վերաբերեալ խնդիրները մէջ երբէք կսզմակերպութեան գործերին չի խառնվի:

Այդ նամակին Բարա—Գասպար իր իսկական անունով պատասխանում է հետեւեալ նամակով:

Պ. Գ. Միքայէլեան, Ստայայ Ձեր ապրիլ 8-ի նամակը, ինչպէս կը վարելիս նրա հետ, այդ իմ գործս է: Այսքանը միայն կասեմ, որ ես երբէք չեմ այնքան ստորանալ որ մարդկանց հետ ուրից հայհոյեմ փողոցային գամէն ի-նման... Այդ վարմունքը խիստ սազ է գալիս Ձեզ:

Յողւածս գրելու ժամանակ ես աչքի առաջ եմ ունեցել մի ամբողջ պատկար, իսկ եթէ դուք ձեր պատկերն էք դրտել նրա մէջ՝ այդ իմ մեղքը չէ: Եթէ եղբայր իր կապիկը եւ հայելին... Կազմակերպութեան խնդիրներում մասնակցելու կամ չը մասնակցելու հարցը զուր էք ներս խոթում. դեռ 90 թւից ես ձեր ճակատին զրօշմել եմ սակիւքնսրս եւ մտաքցել ձեր գոյութիւնը եւ ձգտումները: 99 թիւ ապր. 3/5... Վառնա:

Իսկ ես անձնական աւելի մի խիստ պատասխան եմ գրում, և Գասպարի ու իմ նամակը ներկայումս բերւոյին ուղղված այս նամակի մէջ և ուղարկում:

1899 թիւ 3/15 ապրիլ Վառնա Ընկերներ:

Ուղարկում եմ ձեզ Գրիստափոր Միքայէլեանի ինձ եւ Ս... ին ուղղած նամակի պատճէնը եւ իմ կողմից այդ նամակի պատասխանը: Խնդրեմ, ինչ որ խոտվութիւններ կամ բարդութիւններ առաջանալուց չը վախնաք եւ մտածէք նամակս չը յանձնել: Հաւատարմութեամբ եղեք որ Միքայէլեանի այդ փողոցային նամակը մեր գործերի վրա ոչ մի ազդեցութիւն չէ գործի:

Երբէք այնչափ պաղարիւն կերպով չէի վերաբերվել դէպի ինձ հասցրած վերաւորանքը, որչափ այս դէպքում. Ընդհակառակը նամակը կարողուց յետոյ ծիծաղից սեռայ. Որովհետեւ վերաւորանքը գալիս էր արհամարածս մարդու կողմից եւ դիպածը՝ հանրային տխուր տիպեր նկարագրող յօգւածի միջոցով պատռում էր այն գիր-

մակը, որի տակ գտնուած դէմքը 94 թւականի ամբարից սկսած մինչեւ 98-ի մարտը անուշ կերպով ծպտում էր ինձ, քծնում եւ ամեն ճիգ թափում անուշ խօսքերով հմայելու միտնոյն ժամանակ իր վատ լինելու կասկածը յարուցանում իմ մէջ:

Անցեալ տարվան ժողովների միջոցին եղանակները փոխվել էին. այդ հեղափոխութիւնը դէմքը էլ շատ չէր ծըպտում, էլ այնքան չէր քծնում, մանաւանդ իր հպատակներին մօտ, բայց մինակ ուսացած միջոցին առում էր— սեթէ դու գնաս մի լաւ տեղ. երկիր ես հօրդ համար դրամ կը գտնեմ, սակայն տեղիս ինչպէս ինձ եւ Տիգրանի համար պէտք է անենք, եւ վերջապէս մի օր էլ սասց:

— Ինչո՞ւ չես Պոլս գնում: Երեսակայեցէք, ինձ յեղափոխական դժուարին եւ փափուկ գործ էր առաջարկում այն մարդը, որը իմ անունը լսելու զայնքէ զգում: Ահա այդ մարդին ես հասկացել էի, ժողովների միջոցին ամեն ճիգ թափեցի այդ հին աղէտի դիմակը պատռել, բայց չեղաւ. իմ տուած բոլոր լեղի պիլիւնիլը կուլ տուեց, ծպտաց ուրեց, բայց միայն իմ առջեւ:

Հազար անգամ ցած անւանեցի այն մարդին որ իմ ետեւից խօսում է եւ չէ կարողանում ժողովի մէջ նոյնը կրկնել. բայց նորից լուում էր այդ պարտը:

Դուք էլ այնտեղ էիք պարտներ եւ այսօր դիպածով միայն մի բարեբաւտիկ թէ շարաբաստիկ յօգւածի պատճառով իր ամբողջ դէմքովը երեսան եկաւ Գրիստափոր Միքայէլեանի, որը սիրող յեղափոխականները՝ կարգալով բնազդմամբ իր պատկերն է սեւնում այնտեղ եւ իրան մոտանալով թոյլ է տալիս կարծելու թէ այդ յօգւածը գրողը եւ սպագրողը Գրիստափոր Միքայէլեանին միայն աչքի առաջ են ունեցել: Որչափ յաւակնոտ է եղել պարտը, կարծես թէ հայելու վաճառականը մեղաւոր է եթէ իր ծախած հայելու մէջ սիֆիլիսից քիթը կորցրած մարդը անսնում է իր անճոռնի դէմքը եւ ինքն իրանից զզւում:

Այս սողերը գրելով ես երբէք միտք չուրեմ Ձեզ միջնորդ գատաւորի դեր տալու. գատաւորի պէտք չը կայ: Դուք իմ կողմից բողոքովին անձնական խնդիր է. նրա բերոյի մէջ լինելուն ես ոչ մի նշանակութիւն չեմ տալիս. ընդհակառակը շատ ուրախ եմ որ սիր թագաւորութիւնից հեռացաւ եւ իր մանկաւրիկներից ու թիկնապաններից զրկվեց:

Հարկուոր էր որ տեղահան լինի. ի՞նչ թերթը երբէք չի դառնայ պամփլետանոց եւ իմ թոյլ ուժերով պէտք է կուլ մղեմ հայ վատ տարրի դէմ. ես մեղաւոր չեմ որ դաշնակցականն էլ անուղղակի կերպով կը հարածվի. Բայց երբէք իմ թերթը սկզբունքի դաւաճան չի լինի:

Յետոյ իմ պայքարի ազդեցութիւնը կտրելու համար, ձրգտում են ապացուցիլ որ ոչ մի կարեւոր գաշնակցական իբր թէ ինձ համակարծիք չէ եղել: Առաջին անգամները արդէն յայտարարեցին որ կարեւոր վահանները, Վառնայի յեղափոխական վարժապետը և վարիչը տարիներէ ի վեր գործից քաշված է և իր հրատարականք աւել է այս ձեւով: — Ես անկարող եմ սիրող յեղափոխականների հետ գով զվարել, Բարա—Գասպարը, որ Պոլսոյ պատասխանատու մարմնի անգամն էր 1903-ին գրում է հետեւեալ նամակը կովկասից:

Սիրելի,

Մարգարը գալիս է. յանկարծ պատահեց. չափազանց շատ բան կայ գրելու, այնքան է հաւաքել սրտիս վրա դառնութիւն, որ մի քանի տողերով դուրս թափել անհնար է. Երկու տարի է որ բողոքովին չուած առանց որ եւ է յարաբերութեան մէջ որ եւ է մի գեներալի հետ... Կազմեցեալներ եւ այլ նման անձնաւորութիւններ բողոքովին զգեցրին... մի, որդ, մի ճճի... անգամ վեր կացաւ հայհոյելու... Բ. Եան անւանեց, որովհետեւ չուզեցի իրենց նման պարագիտի կեանք անցնել. այլ ուզեցի իս աշխատանքովս ապրել. Հաշտութիւն այլեւս ինձ անհնար է թուում... Ձարուրելի է երբ զգում ես որ քեզ լեա, միասին միեւնոյն գործի անունով գնացողների, քեզանից աւելի բողոք պատուողների կաշու տակ մի փարիսեցի. մի պարագիտ, մի խաչագող է... դրանից աւելի ծանր, աւելի յուսահատիչ ոչ մի զգացմունք չի կարող լինել:

Հազար երանի, Սէրէմեաններին... հանգստացել են...

Իսկ մե՞նք... արա՞. աշխատի՞ր... շան նման 4) - 50 փարայով ապրիր, կորցրու առողջութիւնդ, ապագայ, կախաղանի պարանը աչքերովդ տես, եւ կրկին հայհոյանքի օտանհարուսթեան ենթարկուիր... եւ այն էլ ուժ կողմից. նրանց, որոնց սիրտը եթէ

քննեն, կէտը նապաստակի, կէտն էլ խաչագողի կր լինի՞լ:

Աշխարհ, քանդու... չըկայ սրբութիւն, չը կայ անձնագոհութիւն, այլ լոկ հացի խնդիր է դառել ամէն ինչ Մի քիչ մաքուր տիպերը թողնում ենեանում են: Մտում են աւանտիւրիստները, կամ ուրիշ ասպարէզում ոչնչութեան դատապարտելու համար ստեղծվածները... ցաւալի է. մահւան չափ ցաւալի:

Քո Բաժնա

1908 թ. մարտ 9

Ամենից հետաքրքիրը և բընորոշողը մեզ արհամարող, կարեւորութիւն չը տւող Վառմեանի նամակն է: Երբ ժընէվում ընկերական ժողով ունեցանք պահանջ գնեալու որ ընդհանուր ժողովը անպատճառ տեղի ունենայ, ես նրան գրեցի իմ տպաւորութիւնները և թէ ժողովը ինչ տեսակ պէտք է անել. և այդ լաւ արտադրացը, հակառակ այդ միջոցին իմ ոչ մի պաշտօնական գիրք չունենալուս, հակառակ իր ծառայական վարձկան վիճակին, մի քիչ չքմեղելով գործի վարիչներին հետեւեալ պատասխանն է գրում.

Բոստօն Մասն 1908 յուլիս 10 Սիրելի վարդ,

Յունիս 21 նամակդ ստացեր եմ. ինչպէս ասկէ առաջ երկտողդ ալ.

Նամակդ ոճը շատ ծանր էր. թէ եւ զլացեր էիր փաստեր տալու, ուրոնք կարենային արդարացնել այդ աստիճան յոռետեսութիւնդ.

Ես չեմ կարծեր որ գործերը այդ աստիճանի հասած են. չեմ կարծեր անոր համար ճիշդ՝ երբ կը տեսնեմ եւ կ'իմանամ կատարող գործերը

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՅԻ

25

Դ Է Փ Ի

Հայկական Ռեման մը (Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ. ԺԵ.

«ՆՂ, ԱՍՏՈՒՄ ԱՊՐԻՄ...»

Շատ դժուար էր գիտնալ թէ ի՞նչ պատասխանէի. ուղեղս հանդարտ չէր, ծրագրերն էին որոշուած եւ եթէ նոյնիսկ որոշ ալ ըլլային անոնք, եթէ նոյն իսկ յոյսերս, հակառակ անկարելիութեան, յաջողութեամբ պատկուէին, մտադրած էի գաղտնիքս մէկուն շըսել—ոչ մինչեւ իսկ հաւատարմի Միքէիս: Բայց քանի որ ուրիշ հարցումները ալ ունէի, ուստի եւ քաղաքագիտական միջոցներ ձեռք առի:

—Այո, ըսի անձեզուն սենեակը... մեծ սրահի մը խարխուլ գերանները... այդ ըլլալու է այն սենեակը, որուն մէջ իշխանը սպաննուեցաւ. ես տեսայ լեռներն ու աւերակները, որոնք վաճօրի մը նմանութիւնը ունէին: Կր յիշեմ աւանդութիւն մը, որ զուն պտտած ըլլալու ես մանկու թեանս, Միքէի: Տեսնելով վանքը,

սահմանազիւր մօտ եւ ներսերը. կազմակերպութեան տեսակէտէ կան հսկաւ շատ թերութիւններ եւ ո՞ր կազմակերպութիւնը չունի. ատոր պատճառն ալ գործիչներու սակաւութիւնն է գործի օր աւուր անող պահանջներուն հետ բողոքատելով. Բնդհանուր ժողովի մը պէտքը ես ալ զգացած եմ եւ միշտ կրկնած երկուրիւրօններուն:

Ես ալ կըրգուենիմ որ ընդհանուր ժողովը Օրինակ ան ժողով մը ըլլալու է եւ ատոր համար անհրաժեշտ է որ երկրէն գործիչներ պան իսկ զրտէն անոնք որ օրինաւորապէս կամ պատգամաւոր ընտրուած են եւ կամ իրրեւ գործիչ հրաւիրված:

Օրինակ ան ի տակը բնդ գծողը ինքը պ. Վառմեանն է... Ուրեմն մինչեւ ընհանուր ժողովը Վառմեանը ինձ հետ. բնդունում էր որ կազմակերպութիւնը շատ թերութիւններ ունի: Որ ընդհ. ժողովը անհրաժեշտ է. որ նա օրինակ ան պէտք է լինի, որ մասնակցողները օրինաւոր կերպով պէտք է մասնակցէին... և միայն երկրի կացութեան մասին իմ յոռետեսութիւնը չստիպաւ զանց էր համարում:

Եթէ Վառմեանի պէս վարձկան մէկը այս չափերով ինձ հետ համաձայնում է, էլ երեւակայեցէք թէ իրականութիւնը ինչ կարող էր լինել:

ՎԱՐԴՕ

ՀՐՈՎ ԵՒ ՍՐՈՎ

Վերջապէս զուր չանցան մեր այն խօսքերը՝ թէ ցարեքմը հաւանականօրէն վերստին յաջողի ջարջախել ներկայ ընդվզումը՝ ուրիշ քնաբեր

այդ հին յիշատակները վերանորոգելու մեծ փափաք մը տիրեց վրաս: Միքէ հարցական նայուածք մը սւղղեց ինձ. որդեօք մատնեցի՞ ինք զինքս:

—Եւ կարծեմ Աշոտի ապաշխարանք ներս ու աղօթքները իր շինած վանքին մէջ կատարուած էին:

—Այո, բայց այս—եթէ հաւատանք—աւանդութեան ամենէն այլանդակ կողմն է, Դէֆիս: Եղբորը սպաննելէն վերջ՝ թագաւորը երբէք չէ տեսնուած որ զուրս էլէ, որով հետեւ ժողովուրդին զայրոյթէն կը վախնար, որ կրտսեր կղբայրը աւելի կը սիրէր:

—Բայց... բայց, Միքէս, ատի պարապ խօսք է: Ուրեմն ինչպէս կրնար վանքին մէջ ապաշխարել, երբ պալատէն չէր հեռանար:

Միքէն գլուխը ժամեց եւ ուսերը թօթուեց. —Ա՛հ սակայն, Դէֆիս քարի հրեշտակ մը, որուն հովանաւորութեան յանձնած էր ինքզինքը իր կատարած սոսկալի ոճիրէն վերջ. աղօթելու ու ապաշխարելու համար կը տանէր ու կը վերադարձնէր զայն օգին մէջէն, անտեսանելի մահկանացու աչքերու:

—Ի՞նչպիսի յիմարութիւն, ըսի ա նարգական շեշտով մը:

—Եթեմարքանութիւնն չէ. Դէֆիս, որովհետեւ աւանդութիւնը այսպէս կըսէ:

Թմբեցուցիչով մը: Ու այդ թմբեցուցիչն ալ Տուժայէն վերջ, Սահմանադրական Ուղարկի խաղաղութիւնն էր. որ աւելի սուղի նստեցաւ ոտս ժողովրդին ու հպատակներուն՝ քան բոլոր նախորդները:

Անցեալ օրերը պ. Սղէտ. անդլիացի նշանաւոր հրապարակագիրը, Բօքէնհակէ անցած պահուն՝ զէպի Պէռլին ուղեւորութեան համար տեսակցութիւն մը կուռնեայ ինձ: Բայց ինչ կը հարցնէ Ռուսաստանի կացութեան մասին, Սղէտ, հակառակ իր չափազանց լաւատեսութեան, կը պատասխանէ. —«Մինչեւ այսօր լաւնիւրդ զեռ մէկ աղօտ պատկերն է գալիքին. մինչեւ այսօր հոսած արիւնը առուակ մըն է գալիքի ովկէսին մօտ: Յարը խիստ ուշ խելի է եկաւ և ու Քորնիլը խիստ ուշ հասան... ժողովուրդը կատաղած է...»

Ասկէ քանի մը օր վերջ Բարիզեան «Մաթէն»-ի ժընէվի թղթակիցը տեսակցութիւններ կուռնեայ տեղական զանազան յեղափոխական կուսակցութեանց վարիչներուն հետ և անա թէ ի՞նչ կը հարցնէ իր թերթին մասնաւորապէս Պ. Բիլիսանովի յայտարարութիւններէն:

Այս պահուս թերթը չունիմ աչքի առաջ որ կէտ առ կէտ թարգմանեմ հոս, բայց իր բովանդակութիւնը կը յանգի հետեւեալին:

Բիլիսանով ներկայ Սահմանադրական Ուղարկի երեւուած կը նկատէ որպէս ճարպիկութիւն մը՝ յատուկ ցարկովին առանց ստոր գործադրութիւն ամենաթեթեւ հաւատքն իսկ ընծայելու: Երբօրս ստորագրած է զայն որովհետեւ պարագայի պահանջն էր զաւարտութիւնն և ո՛չ մէկն ալ շահ մը ունի. —ո՛չ յեղափոխականը, ո՛չ ուսանողը, ո՛չ բանւորը, ո՛չ ազատականը. Դա զբոսուած ամփոփի աչքին փոշի փչել է՝ զանոնք խարխալեալու, զանոնք շփոթելու և շմորելու համար իրենց տիրական

վազքին մէջ, Պ. Բիլիսանով այն կարծիքէն է որ և ո՛չ մէկ գիտակից յեղափոխական կամ ազատական պիտի հաւատք ընծայէ ատոր և պիտի շարունակէ կռիւը անկասելիօրէն: Իսկ միւս կողմանէ Վիթէի նախարարապետ ընտրութիւնը կը զանէ է՛ն վտանգալի պարագաներէն մէկը յեղափոխութեան համար: Յարեալ մշտնջենական խաղն է այդ, աւելցուցած է Բիլիսանով. ամեն անգամ որ զժողովուրդին երեւան զայ կը գանեն ելք մը. Լիսապէս, միւսնոյն պայմանով ընտրուեցաւ Բիլիքէ՝ որ գայլ մըն էր Միւսնոյն ազատական հովերով ընտրուեցաւ Սվեազօբուլ Միրսքի որ խորամանկ աղուէս մէր և յաջողեցաւ բորբոքած հասարակութիւնը խարխալու կատաղած կործաքէրը ինչեցնել: Միւսնոյն նպատակով կընտրուի Վիթէ և սա. ըլլալով միանգամայն զայլ ու աղուէս, առաւել վտանգաւոր ու աղետալի վախճան կը խոստանայ յեղափոխութեան քան արիւնարբու Բիլիքէ:

Եւ ինչո՞ւ չըսել որ այս երկուս կանաւոր անձերու գուշակուած իրականութեան շաղկապ մէջ մտնել սկսաւ զեռ շատ կասեմէն, նոյն Սահմանադրութեան յաջորդ օրը...

Սահմանադրութեան պատմութեան է՛ն եղբրական ու հրէշուար արարքներէն սէկն է որ կատարուած է խաչազուլի զազանի մը կողմէ: Յարի կամակատարները շուարած թողուցին վրայ նստող կարմիր ծիւղիւն: Ինքնակալութեան սպասաւորները թեթեւ հաշուով մը չէ որ թողուցած են իրենց ամբարձակ պատմութեան անկողար սպիտակութեան մէջ, առանց նախագուշակման չէ որ զպրօցէ աւելի բանաւ և զգրեքէ աւելի մտրակներ պատրաստել տուած են:

Սահմանադրութեան և ազատութեան անունը խելակորոյս դարձուց զժախսաւորութիւն և, մինչ գիտակրիցներ ատոր անպէտքութիւնը կը

ԳԼ. ԺԶ.

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂԱՌԻԱՄ

Այդ գիշերը շատ քիչ քնացայ, եւ երբ, անկարգ սոսկուեցիք լուրը ծանրացաւ աչքերուս այն ատեն գեղադիտական փոփոխութեամբ մը երազներուս առարկան դարձան նախանձուտ Աշոտը, չքնաղ չէրքէզուհին, ամենէն սիրուած կրտսեր եղբայրը Մերթ կը տեսնէի Աշոտը որ հրեշտակին թեւերուն վրայ օդը կը ճեղքէր, մերք անգութ մարդասպանը, որ կ'ախտէր ինքնուրու ծանրաբեռնուած փապուլիներուն մէջէն կը քաշվառէր զիս: Այսու ամենայնիւ, աւելորդ է պատմել այն բոլոր, որոնք նախընթաց օրը ուղեղս գրգռելով՝ այժմ ինքնաբերաբար կը վերանորոգուէին: Բայց եւ այնպէս, ատոնք միանալով Միքէի պտտած աւանդութեան, զիս համոզեցին, որ կար հնարաւորութիւն մը—եթէ ոչ հաւատարմութիւն—մեր պալատէն գէպի այն վանքը տանող գետնափոր արահետի մը, որ այնքան ուշս գրաւած էր. ուստի առանց ո եւ է միջոց խնայելու՝ այս ճամբան գտնել—եթէ երբէք գոյութիւն ունէր—ինձ կեանք ու ազատութիւն շնորհելու հաւանականութեամբ, այժմ անխախտ որոշումս էր:

Ուստի, զեռ կանուխ արալայիսին,

ոտքի ելայ, հագուեցայ ու սրատաւոր մարմարի կտորներէ բաղկացած լայն խորթուլ սանդուխներէն վեր բարձրացայ, որոնք զէպի արեւմտեան մասի աւերակները կը տանէին: Մինչ կը բարձրանայի, միտքս ակամայօրէն նախքին շեղուեցանց վերայ դարձաւ: Այսպատէ կտորտուած սիւներ, փղոսկրէ քանդակներ, ոսկեղօծուած նախնիք պատեր, ոսկեզարդ հանդերձեղէնք՝ մըլտած ու ցնցակեր, խիստ հազուադիտ ու մեծագին առարկաներու բեկորներ, բոլորն ալ սէկ-մէկ անկիւն նետուած: Ու հիմա, հոս էր այս բոլոր չքեղութեանց իշխանական տէրերուն ամենավերջին գաւազը, որ սեծափափաք քայլերով՝ անցելի այս աւերակներուն մէջ, այս աննիւթ պերճանքներէն ելք մը կը փնտռէր իր մատաղայ հոգին փրկելու՝ կեանքի ու սիրոյ համար... «Ունայնութիւն ունայնութեանց» ամեն ինչ ունայնութիւն է է՛ս:

Այժմ կրկին մտայ արքունի սենեակը, ուր երիտասարդ իշխանը սպաննուած էր. անտարակոյս, ի ներկայութեան իր սիրուհին—գեղեցիկ չէրքէզուհին... Այս սենեակը թիւղուեցաւ. —գեւեի մը կողմէ, կըսէ աւանդութիւնը: Սակայն յիշելով մօրս պատմութիւնը, խորհեցայ թէ հարկ չը կար շատ հեռուն երթալ դեւերու համար, նոյն իսկ

հաշակէին, հարուածները ուղղուեցան անոնց, որոնց հետ պահ մը առաջ թերեւս կը կուտէին քով քովի:

Անգլիական օրսթերթեր գուժեցին մտաւորապէս 13 հազար կորուստ կեանքի Օտէսա. ոչոնցմէ 3-4000ը սպանուած իսկ մնացեալը վիրաւոր, Բոյոր այն քաղաքները՝ ուր հրէական մեծամասնութիւն կայ, դարձան արիւնի և աւերի հանդիսավայր: Մեծ հարիւրակ՝ ճիւղաբան քանակը, որ կը գտնուի կառավարութեան անմիջական և յայտնի հովանաւորութեան ներքեւ, սկսած է անհարազարելի վանասիրիքով գործը:

Ոստիկանութիւն և քաղաք սրբազան հայրենասիրութիւնով մը բորբոքած, թեւ թեւի կոյր ամբոխին հետ, կը ջարդեն կը խորտակեն. կաւերեն ու կը քանդեն հրէաներու տուներ ու խանութներ Օտէսա. Քիլիկ, Սարգոյի, Քիլիկի և այլ հրէայ կետրոններ գրեթէ հրեայ չէ մնացած եւ ոչ ալ հարստութիւն: Վնասը, որքան անձի, նոյնքան եւ նիւթական է: Հրէայ առեւտրականներու կորուստը հասած է անսովոր միլիոններու Այս կոյր ու պաշտ ամբոխին իր վայրագ ու կոշտ աջակցութիւնը տալէ վերջ կառավարութեանը օգնութիւն կուգայ նաեւ կղերական ֆանաթիկութիւնը. Եկեղեցիին բնակիչները կը կանչուին Ռուսաստանի հարազատ զաւկերներէն՝ լուծելու հրէայ ամբոխին վրայ, որպէս միակ պատճառ խոտմութեանց: Այս ահաւիր օրերուն երբ մեծ քանակութեամբ հրէաներ կը փութեն սինակով մը՝ ապաստանի համար, ռուս քահանայ մը զլիսուն կանչելով մարդակերներու խմբակ մը, կը յարձակի հոն եւ տեղն ու տեղը կայրեն ու կոշնչացնեն զանոնք, այն պատուակով որ իբր թէ պատրաստութիւն կը տեսնեն եղբր քաղցին վրայ թափելու եւ ոռոտները կոտորելու:

Այս բոլորը կարելի է չափազանցութեան նկատեն ոմանք, բայց Բա-

րիդի մեծ Ռաբբային կողմէ կազմուած Կաթողիկոսական յանձնախումբին յայտարարութիւնը՝ որ կող կընէ բոլոր հրէաներուն օգնութեան ձեռք կարկառել, կաւեցնէ նաեւ նոյն ֆրանսական թերթերուն մէջ թէ մամուլի կողմէ հաղորդուածները իրապէս կանոնական մէկ նշոյն իսկ չեն տար եւ իրենց սեփական տեղեկութիւնները կը պարզեն որ կայտնութիւնը դժոխային ու անբացատրելի է... Ձը նայելով հանգիւրձ սեռիան խաբուածութեան, բացառութիւն չկայ նաեւ հասակի: Քիլի չէ 5-10-15 տարեկան աղջիկ եւ տղոց խողխողումը, իսկ անհամեմատօրէն նաեւ աւելի է որովայններէ զուրս հանուած անծիններուն ի իւր:

Քիլիցի կոտորածի ժամանակ առաջին ձայն բարձրացնողը ելաւ Լօւտօնի քաղաքագիտը, պ. ձօն Բաուրնաս հրեայ մը, եւ իր բողոքը բաւական ազդեցութիւն ունեցաւ: Այս անգամ Նիւ-Եօքթի եւ առհասարակ բոյոր Մ. Նահանգներու ակաւաւոր հրեաներ, որոնք չափէն աւելի են եւ որոնց ձեռքն է մամուլի լիակատար մասը, խնդրեց եւ առաջարկ են մատուցած Ռուզվելթին միջամտութեան համար, բայց սա վերջինս յայտարարեց է իր անկարողութիւնը:

Մ. Տոլակ (Շարունակելի)

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ամերիկա Քաղաք... էոկ. 31

Սիրելի Վարդօ,

Դաշնակցութեան դէմ մղած ազնիւ պայքարիդ կը համակրիմ, իցի-թէ այդ պայքարը նախորդ պատգ ժողովէն առաջ սկսած ըլլայիր, թեւեւ Սասունը արիւնի ու մոխիրի

մէջ չէր խեղդուէր և հայ հասարակութիւնը շատ մը նոր եւ խիստ հաւանական էր զերծ մնար. ինչ որ է, քանի սկսած էք ջանալու էք յաջողութեամբ դուրս գալ:

Դժբխտաբար անձնապէս ծանօթ չենք իրարու. թերեւս ծանօթութիւն մը կուրենանք օր մը. Լեռնայի մասերը պարզ կըզգամ իմացնել թէ Վաւառ երբ ձեր յարուցած խնդիրներու վրայ իրեն հետ խօսուի, շատ մը պատմութիւններ կընէ. որոց բըւաւ հաւատք չի ընծայուիր. յետոյ մինչեւ օրերս լուրսեան գիտողութիւններու կը պատասխանէ. «Արեւմտեան պի. րօն Վարդօյի պէս տղու մը չզիջանիր պատասխանել. մենք ալ մեր դիրքին ու պատիւին չի պիտի ներձիք այդ պաշտանեան խաչագողին վայրահալութեանց պատասխանելու, եթէ մեր շարքերը «Հայրենիքը չըստիպէին որ լուսաբանութեան սիրոյն համար յանձն առնէինք բաներ մը ըսել. այս քանի մը օրէն պիտի սկսիմ, քանի մը տօքիւմաններ կ'ապաստեմ և այն ասան պիտի տեսնէք թէ ինչպէս Վարդօն լեզուն... պիտի վախցնէ (այդ կէտերը մի սրիկայական խօսք են պարունակում իրենց մէջ որ Դաշնակցութեան այդ պնդիկ սատարապի բերին շատ են վայելում):»

Այժմ երկու թիւ է որ սկսեք է ձեզմով զբաղիլ...

հեռուէն կ'իմանամ որ Արեւմտեան պիւրօյն և Պալք. Կեղր. կ'օմիտէն թղթակցութիւններ և տօքիւմաններ բերել առած է եղբր:

Ամերիկայի Դաշն. ընկերներուն վրայ բաւական զօրաւոր ազդեցութիւն պիտի ընէ Ձեր Վաւառի տալիք պատասխանները, որովհետեւ հոս տեղի ընկերները «Հայրենիք» ըսածներուն շատ կարեւորութիւն կուտան և թէ ջանջախիչ պատասխաններ

—Մեռնի՛ր... Աստուած իմ, ո՞վ կուզէ որ մեր Դէֆին մեռնի... —Սակայն... սակայն... պէտք է... պէտք է... Միքէ. ինչպէս շեխուսի աղջիկը...

—Նրբէ՛ք, Դէֆին, նախ Միքէն պիտի մեռնի.

—Այո, այո, հաւատարիմ Միքէն, բայց, ո՞հ, ապրիլ կուզեմ... ապրիլ... —Այո, իշխանուհիս պիտի ապրի. մեր հայրերուն Աստուած այնպէս կըսէ ինձ Սրտաբոլէն ուղի ելաւ. Անքերը փայլեցան. Հնադարեան սիրելայի մը նմանութիւնը ունէր էն. Լոյսը վերադարձնելու վերջնական հոգեւոր մէջ. Ինձ համար պատրաստ գաւաթ մը սուրճը հապճեպով խմեցի. փոքրիկ կանթիկ մը եւ տուփ մը լուցկի առնելով պատրաստուեցայ խոզարկութիւնն շարունակել. Միքէն ապշանքով ինձ կը նայէր անխօս հարցում մը աչքերուն մէջ.

—Մի հարցներ, Միքէն, ըսի խոհուն կերպով, հիմա՛ կամ երբէ՛ք արեւելեան կողմանոցին այն սենեակը կերթամ, ուր տարիներ առաջ զժբախտ իշխանը սպանուեցաւ.

—Աստուած... իմ... բացականցն էն մեզմ ձայնով ու սարսափահար. Դեւեր կան այն տեղ.

—Դեւեր ամեն տեղ կան, Միքէ, ու հեռացայ.

Իայց եւ այնպէս, փրուզուն գա-

պակօի ձեռք բողոքող ու դժգոհ ընկերներն ալ պիտի կասկածին և թեւեւ քաջութիւն կողմակերպութենէ կամ Վաւառի համակերպին և անոր հու հետեւողները դառնան

Ատեն մը կար որ ձեզի դէմ սպառնալիքներ կընէին. բայց վերջերս դադարած են անանկ յիմարական խօսքեր ընելէ:

Հաճէ՛ր ընդունիլ ձեզի կատարեալ համակիր ընկերոջ մը յարգանքները: ()

Մ. Մ. — Մենք ինչպէս մեր նախորդ յօդուածով Վաւառի հասցէին ընդհանուր կերպով խօսած սողիկ մէջ խօստացել էինք պարոնի յօդուածներին շարքը վերջնական յետոյ պատասխանել. նոյն խօստումը կրկնոււմ ենք և հիմա:

Աս սյամ այդ պնդի սատարապէս վէպեր ի սելու հաճոյքը վայելէ. Մեծ շնորհակալութիւն Ամերիկայի այն դաշնակցականներին, որ Վաւառի ստիպել են վերջապէս հրապարակ գալու որովհետեւ Դաշնակցութեան մէջ գտնվող ամենապատասխան օրգանն էր այդ պնդիկ սատարապի եւ պաշտանեան մանկաւէկներին օժիւրը բանելու առիթն են ստեղծել:

ԿՈՎԿԱՍ

ԱՐԻԻՆՈՏ ԷՋԵՐԻԾ

Շուշուց մեր թղթակցիցը հոկտեմբեր 1-ից գրում է մեզ.

«Երկ հեռագիր ստացուեց. որ Եւրասիան ճանապարհի վրայ նորից անկարգութիւններ են սկսուել. այդ պատճառով, այսօր ոչ ոք դուրս չի գնացել քաղաքից զէպի Եւրասի. Վաղը կամ միւս օրը գնալու են զինուորներ

ներկայիս մէջ ալ: Աչքերս վանքին յառած էին, որու մասին կը մտածէի. իր հովտին մէջ, ինչպէս երեկ, կը հանգչէր ան վարդագոյն արջալոյսին աակ: Յանկարծ ամպ մը անցաւ վրայէն ու սենեակը կիտով մը սարսուցի. չէի կրնար կենալ—պատրաստուեցայ փախչիլ: Մէկէն արիւնքիւն մը, որ ինձ յատուկ չէր, պաշարեց հոգիս, և՛ փախկոտ, գոչեցի բարձրաձայն ու արձագանքները անդրաձայնեցին բառու սփախկոտ, կեանքի՛, սիրո՛յն եւ Սիւլէյմանի համար էս: Վախերս փարստեցան ու այլեւս չը վերադարձան, թէպէտ եւ այդ արտակարգ խուրդարկութեանս մէջ, որուն յանձնառու եղած էի, զիս անուրի սարսափներու ենթարկելու շատ մը պատճառներ կային:

Գանի մը բոլոր հանգչեցայ ան դորութիւնս վերստանալու համար. աչքերս յառած գրիմացի հսկայ պարպութեան վրայ: Ինչպէս ըսի, առջեւ տարածուած էր սենեակին այն կողմը, որ ուղղակի վանքին վրայ կը նայէր. երկու կողմի պատերը անձեղուն աւերակներ էին, բայց իմ կանգնած տեղս, շնորհիւ շարք մը մարմարէ սիւներու, անխախտ պահաց էին գայն: Եթէ գետնափոր ուղիի հնարաւորութիւն կայ, սենեակին այս մասէն զատ ուրիշ տեղ չը կրնար ըլլալ, խորհեցայ: Այո,

հոս պէտք է ըլլայ, ըսի, բարձրաձայն խորհրդածելով, որովհետեւ ամէն անգամ որ շուշու քաշէի, տակաւ առոր գոյութեան նկատմամբ ունեցած համոզումս կը զօրանար. բայց եւ այնպէս—բացարձակապէս ոչինչ կար զիս այս երարկացութեանս հասցնելու—բացի իմ յայտնատեսութենէս—կամ ներշնչութէս, եթէ կուզէք.—որ կը յուսարկէս զիս ու յառաջ կը մզէր տակաւին. երկու սիւներուն մէջ տեղ գտնուած պարապ միջոցը—միակ տեղ ուր բացուածք մը ըլլալու հնարաւորութիւնը կօր, կրկին քննեցի. բայց առոնք կարծի պատեր էին, յոյս չըկար... ծանր հառաչ մը հանելով՝ մարմարի կոտորի մը վրայ նստեցայ եւ... այո, պէտք է խոստովանիմ... լայի. Մեծանձ տնկերով, արեւազգէն սկիւղաւառանց ուտելիքի աշխատած եւ խուզարկած էի բոլոր ի գուր. Յուսարկումս տաժանելի էր. Լուսաղկոտ ձայն մը լսեցի, որ զիս կը կանչէր. Միքէի ձայն էր այդ. ուստի ելայ ու վար գացի. Անձկագին ինձ կըսպասէր էն:

—Իշխանուհիս, Աստուած իմ, գոչեց էն, ո՞ր էիր.

—Մի հարցներ, Միքէս, հիմա բան մը պէտք է հարցնես երբէք. կախաատի գտնել այնպիսի բան մը որմէ կախում ունի կեանքն ու մահը. Ո՛հ, Միքէս, չեմ ուզեր մեռնիլ.

Եթիւն մէջ սանդ լինելուն վրայ վարանեցայ.—«Ի՞նչ նպատակ ունի այս նոր խուզարկումը, փսփոսաց հագիս, չը մնաց կէտ մը որ չը քննեցիր». Այս մրմնջական հարցումներուն պատասխանը ժխտական էր.— Ոչինչ... սակայն եւ այնպէս յառաջացայ. Անգամ մը եւս մտայ սենեակ. ներս մտած պահուս, թաշու մը—ճիծեռնակ մը—ձեզնայարկին վերայէն, անկիւնէ մը, ուր իր բոյնը զրած էր. դուրս թուաւ. Զարմանալի է որ այդ անկիւնը նախապէս նրկատած չի եւ. բայց եւ այնպէս դեռ յուսարկիչ կ'էտ մը չկար—բացի այն որ չէի հետազօտած. Սենեակին այն ծայրագոյն կողմէն է, ուր էին եւ տանիքը պինդ բռնող բարձր սիւները եւ իրապէս ուրիշ բան չէր, բայց եթէ նկարագրած պատերու շարունակութիւն, սա տարբերութեամբ, որ այս անոնց կէս լայն նութեամբն էր, ինչպէս եւ վերջին սիւնին ու քովի պատին մէջտեղ եղած մնացորդ հեռաւորութիւնը. ուստի հոգ սը գապի, ու ձեռքի փոքրիկ մուրճովս պատը ձեռնի սկսայ, ինչպէս ըրած էի միւս կողմերը.

(Շարունակելի)

և գրանց հետ միասին քաղաքից շարժուելու է պանդուխտների մի նոր հասանք...

Շուշուց մեր միս թղթակիցը հոկտեմբերի 1ից գրում է մեզ. «Անցեալ օրը շուշուցի մի քանի գինուած երիտասարդների, որոնք իրենց հայրենի գիւղերից էին գալիս, ոստիկանութիւնը կալանաւորում է և բան նստեցնում, հրացաններն էլ ձեռքնեցրելը խլում, միւս օրը դրանց ուղարկում են և հրացանները յետ դարձնում. այժմ, ինչպէս հաստատ իմացանք, նոյն երիտասարդները նորից բանտարկուած են, որովհետեւ թուրքերը մի ընդհանրական հեռագիր են տւել նահանգապետին, որ այդ բանուած անձնաւորութիւնները տեղական հայկական կօմիտէի մարդիկն են և Շուշու աւերման հերոսները. իրանք քանդելու աւերել են ամբողջ Շուշին ու փրկատակ դարձրել, և դեռ համարձակվում են մեզը զցել անմեղ երիտասարդները վրայ, որոնց չուր տեղը բանտարկել են. Միջնորդուած է, որ այդ բանուածները անմեղ մարդիկ են և յոյս ունենք, որ շուտով իշխանութիւնը կարձակի դրանց բանտից»:

Երեւանից մեր թղթակիցը հոկտ. 2ից գրում է մեզ. «Քաղաքում հանգստութիւն է տիրում. թուրքերը «շան, բէզարներին» կարգադրութեամբ հայերի տները շէնքնում աշխատելու, Այժմ գնում են Սաստիկ խուզարկում են հայերին և մասամբ թիրաքերի»:

«Փետրվար 6—9ի Բագուի արիւնահեղ զէպերի քննութեան գործը, յատուկ ծանրակշիռ գործերի քննիչ էլէվտրոլը սեպտ. 30ին վերջացրեց և մօտ 412 հատոր ուղարկեց դատախազի օգնական Մակարիւնսկուն՝ մեղադրական տեղեկագիր պատրաստելու համար, նախնական քննութեան համար պէտք եղաւ 8 ամբողջ ամբաներ»:

«Իրֆ. Լիւթօքոի յատուկ թղթակիցը հոկ. 4ին հեռագրում է Եւլախից հետեւեալը.

«Հոկտ. 3ին 500 թուրքեր յարձակուեցին Ասանկու հայ գիւղին վրայ, վիրաւորեցին մի հայի և տարան 200 տաւար. Զիւանշիրի գաւառապետը գնաց Ասանկու»:

Բագուի ընդհանուր նահանգապետ ծագէեվը յայտարարել է Բագուի Տեխնիկ. ընկերութեան ներկայացուցիչներին, որ «նա-

շա ժիզնո և այլ մայրաքաղաքի թելթերի մէջ երեւացող այն լուրը, որ իբր թէ նա հային տէլիգէնցիային և մանաւանդ Տեխնիկ. ընկերութիւնը մեղադրում է Բագուի արիւնահեղ զէպերի համար ու նրանց է յանցաւոր համարում — սուտ է: Նա այդպիսի խօսքեր երբէք և ոչ ոքի էլ չէ ասել («Պագու»): Նաւային վերահսկողի օգնական կիրտսկոլը սեպտ. 27ին, Աստարխանից եկող «էլէլիւնո» նաւը դատարկելու ժամանակ նա տէժդայի նաւամատոյցի մօտ — բռնեց 4 սնտուկ մեծ քանակութեամբ փամփուշտներ: Այդ բեռը երեւաց որ գնալու էր Եւլախ և սնտուկները վրայ դրուած էին «ապակեղէն» բառեր»:

«Պագու»
Թիֆլիզ եկած թուրք հոգեւորականները և ինտելիգենտները ներկայացուցիչներին մէջ միտք է ծագել Թիֆլիզ հրաւիրել մի համաժողով թուրք հայկական խաղաղասիրական խորհրդակցութեան համար. («Վօզդ.»)
ԱՄՇԱՆՈՅՍ

ԿՈՎԿԱՍՏԱՅՔ ԳՐՈՒՆԻԿ

Կովկասի փոխարքայի միջնորդութեամբ, Թագաւոր Կայսրը, Բուխարին ամենահպատակ զեկուցման վրայ սպասեմբերի 24ին քարհաստեց թոյլատրել Կովկաս վերադառնալու Օրէնբուրգ արսորուած Սուքրաս արքեպիսկոպոս Պարզեանցին:

«Վերադարձող աքսորուածներ» Կովկասի Փոխարքան հնարաւոր գտաւ ջնջել 1904 թուին տրուած արսորի վճիռը ընդգէմ Ախալքալաքցի Մ. Մանուսէլեանի, Խ. Եղուներանի և Ա. Յովակիմեանի և թոյլատրեց այժմիսկ վերադառնալ իրանց հայրենիքը:

«Սնտուկ» ՊՈՒՄՍ. Անցեալները մի աւուս օրիորդ՝ նշանուած լինելով մի հայ երիտասարդի հետ, ցանկութիւն էր յայտնել հայ լուսաւորչական դաւանութիւն ընդունելու: Աստրախանի թեմական առաջնորդը համաձայնութիւնը տալով, կարգադրել էր, որ այդ օրիորդը ընդունուի հայ եկեղեցու ծոցը՝ պսակից առաջ հաղորդութիւն տալով նրան և պատշաճաւոր աղօթք կարդալով վրան: Որքան գիտենք, սա առաջին զէպքն է ապրիլի 17 ի հրովարտակից յետոյ:

«ԿՍՄՍՍ» «Վերջապէս երկարատեւ և մաշող սպասողական գրութիւնից յետոյ այսօր տեղիս պատշաճաւոր վարչութիւնը վերադարձրեց 1903 թ. յունիսի 12 ի բարձրագոյն ուղարկ համաձայն վերցրած եկեղեցական կալուածները»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսէն կը հեռագրեն հոկտեմբեր 29ին. Մեծ պետութեանց դեսպանները երկուշաբթի նիստ մը պիտի ունենան Բ. Իրան տաւիք վերջնագիրը խմբագրելու համար, որ պիտի յանձնուի թուրք կառավարութեան Մակեդոնիոյ ելեմտից քօնթրօլը ընդունել աւալու համար, 48 ժամուան ժամանակամիջոց մը պիտի տրուի պատասխանին համար: Պատասխանը ժխտական ըլլալու պարագային Եւրոպական դաշինքները անմիջապէս պիտի որոշեն նաւային ցոյցի կերպը: Արդէն որոշուած է որ ցոյցին մասնակցող նաւերը Իրիէայի քովը պիտի միանան. ցոյցը տեղի պիտի ունենալ տասն օրէն վերջ: Կը ենթադրուի թէ Տարտանէլը պիտի պաշաւուի:

Հանրային Պարտուց վաբշուութիւնը կը շարունակէ հակառակիլ քօնթրօլին:

«Հօնտօնէն պաշտօնապէս կը հաղորդուի թուրք պետութիւնները ի թիւս որոց և Գորմանիա համաձայնած են Թուրքիոյ զէմ ծովային ցոյց ընել»:

«Պօլսէն» «Վէլէրնա Բօշթապի կը հեռագրեն հոկտեմբեր 30ին. այսօր Սուլթանը պիտի երթայ Թօփ. Գարուի պալատը Խրքաի Շէրիֆը Մարգարէին վերարկուն համբուրելու. մեծ զգուշութիւններ ձեռք առնուած են ու է մահափորձի առջեւը առնելու համար: Այդ պատճառով մեծ քանակութեամբ հայեր և երիտասարդ թուրքեր ձերբակալուած են: Ժողովուրդը շատ անհանգիստ կացութեան մէջ կը գըտնուի»:

«Պուկարական նաւը Պօլսոյ նաւահանգիստը հասնելուն պէս իսկոյն շրջապատուեր է պատեղարկական մակոյկներով և խուզարկութեան ենթարկուեր. կասկածելի բան մը չէ գտնուեր. միայն թէ քաբթիանի սենեակին մէջ ձուկ սպաննելու փամփուշտներ գտնուեր են. այդ պատճառով քաբթիանը իսկոյն ձերբակալուեր և բանտարկուեր է: Նաւն ալ ձերբակալուած է. պուկար գործակատարը դեռ յաջողած չէ սղստել»:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Կոտորածներ տեղի ունեցած են Պաքու, Պաթում, թէ ժողովրդին և թէ քաղաքներէն մեծ քանակութեամբ սպաննուածները:

«Իեթերսպուրկի մէջ զինուորական գուետ մը անցեր է յեղափոխականներուն կողմը: Այստեղի յեղ» փոխականներու

գինուած ուժը կը հասնի 25000ի վախ կայր պատերազմական և վաճառականական նաւերը գրաւելու փորձ ըլլայ յեղափոխականներուն կողմէն:

«Իրօնտատի խոսովութիւնները տեղի ունեցեր է ծովային չինուորներու կողմէն որոնք տեսնելով հանգիպելով փողոցին մէջ իրենց մահուան դատապարտած ընկերներուն, բանտէն տանելու միջոցին, յարձակեր են պահակախմբին վրայ և զանոնք ապստեղծ սկսեր են քաղաքը աւերել և թալանի տալ»:

«Օւեստայի քոլոր հիւպատոսները գլմեր են նահանգապետին և սպառնացեր որ եթէ խաղաղութիւնը չը վերահաստատուի քաղաքին մէջ իրենց պետութիւններէն պիտի պահանջեն որ Պօսթօրի մէջ զըտնուած պահականաւորը Օտէսսա զրկուին»:

«Հոկտեմբեր 30ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն. առ այժմ հոս խաղաղութիւն կը տիրէ: Ամեն երեւոյթէ կը հասկցուի որ այլեւս խոսովութիւններ չը պիտի տեղի ունենան»:

«Պաշտօնական թերթը» կը յայտարարէ նոր նախարարներուն անունները:

«Պուկիկին հրաժարած է. կը հաւատան որ Թրէքօփի հրաժարականն ալ ընդունուած է. նոր նախարարութիւնը կազմուած է յառաջադիմականներէ»:

ՅՐԱՆՍՍ

Պատերազմական նախարար Բէրթօ. ընկերվարական, հոկտեմբեր 28ին իր հրաժարականը տուած է երեսփոխանական ժողովին, յայտարարելով որ աչակողմաններու, այսինքն պահպանողական և չափաւոր կուռակցութեան, օգնութեամբ կառավարել չի ուզեր:

Այդ պատճառով նախարարական պաշտօններու փոփոխութիւններ տեղի ունեցաւ և հիմայ ամբողջ նախարարութիւնը կազմուած է չափաւոր հասարակապետականներէ:

Գլ տարի երեսփոխանական ընտրութիւններ և նախագահի ընտրութիւն պիտի տեղի ունենայ: Ընկերվարականները և արմատականները վախճալով որ Ռուվրէի դաշինքը պիտի քաջալերէ չափաւորները այդ ընտրութիւններուն մէջ փորձեցին ներկայ դաշինքը տապալել: Սակայն փորձը ապարդիւն եղաւ. ու Բէրթօն էնտրիգներու զոհ եղաւ»:

